



Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2010 թվականի տարեկան հաշվետվություն

1. Վերահսկիչ պալատի հաշվետու տարվա ընդհանուր նկարագիրը

Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի գործունեությունն իրականացվել է՝ *Հայաստանի Հանրապետության Մահմանադրության և «Վերահսկիչ պալատի մասին»* Հայաստանի Հանրապետության օրենքին, Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2010 թվականի գործունեության տարեկան ծրագրին (այսուհետ՝ Տարեկան ծրագիր) համապատասխան:

Վերահսկողություն իրականացնելու ընթացքում Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատն (այսուհետ՝ Վերահսկիչ պալատ) առաջնորդվել է *Գերագույն վերահսկիչ ատյանների միջազգային կազմակերպության (ԳՎԱՄԿ/INTOSAI)* վերահսկողության սկզբունքներով:

Վերահսկողության արդյունքներն ամփոփվել են Վերահսկիչ պալատի 40 ընթացիկ հաշվետվություններում, որոնք «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն Վերահսկիչ պալատի խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կողմից հաստատվելուց հետո տասն օրվա ընթացքում ներկայացվել են ՀՀ Նախագահին, ՀՀ Ազգային ժողով և ՀՀ կառավարություն: Ընթացիկ հաշվետվությունները հաստատվելուց հետո 30 օրվա ընթացքում տեղադրվել են Վերահսկիչ պալատի ինտերնետային էջում, բացառությամբ թվով 5 ընթացիկ հաշվետվության, քանի որ դրանք պարունակում են «հույժ գաղտնի» տեղեկատվություն և դրանց կարելի է ծանոթանալ ՀՀ Ազգային ժողովում՝ օրենքով սահմանված կարգով:

«Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի համաձայն, ՀՀ Նախագահին, ՀՀ Ազգային ժողով և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի կատարման մասին» ՀՀ կառավարության հաշվետվության վերաբերյալ եզրակացություն (տեղադրվել է նաև Վերահսկիչ պալատի ինտերնետային էջում):

«Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով վերահսկվող օբյեկտների ղեկավարները Վերահսկիչ պալատին տրամադրել են տեղեկատվություն ընթացիկ հաշվետվություններում ամրագրված՝ հայտնաբերված խախտումները վերացնելու ուղղությամբ:

Տարեկան հաշվետվության մեջ հիմնականում ընդգրկվել են առավել ընդհանրական խախտումներն ու թերությունները:

Տարեկան ծրագրի կատարման ընթացքին առավել մասնրամասն ծանոթանալու համար նյութերը տեղադրվել են Վերահսկիչ պալատի պաշտոնական կայք էջում (www.coc.am):

2. Պետական և համայնքային բյուջետային միջոցների անարդյունավետ և ոչ նպատակային օգտագործում

Հաշվետու տարում պետական մարմիններում, համայնքներում և այլ կազմակերպություններում իրականացված վերահսկողության արդյունքում արձանագրվել են անարդյունավետ ծախսի բազմաթիվ խախտումներ և թերություններ:

Մասնավորապես՝

Վայոց ձորի մարզպետարանում քաղաքաշինության բնագավառում հայտնաբերված ծավալային հավելագրումներն ու խախտումները շինարարական օբյեկտներում տեխնիկական և հեղինակային հսկողության համար տրամադրված միջոցների անարդյունավետ օգտագործման հետևանք են: Այդ նպատակով ծախսված 10,500 հազ. դրամն անարդյունավետ է:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի շրջանակներում «Հայջրնուդկյուդի» ՓԲ ընկերության կողմից 104,900.0 հազ. դրամ արժողությամբ թուջե խողովակների կցամասերի ձեռքբերման համար կատարված ծախսն անարդյունավետ է, քանի որ համապատասխան թուջե խողովակները ձեռք չեն բերվել, իսկ ձեռքբերված կցամասերը գտնվում են պահեստում և հայտնի չէ, թե երբ դրանք կօգտագործվեն:

Նմանատիպ խախտումների բազմաթիվ օրինակները ներկայացված են Վերահսկիչ պալատի ընթացիկ հաշվետվություններում:

3. Շինարարական աշխատանքներ

Շինարարական աշխատանքների վերահսկողության ընթացքում արձանագրվել են բազմաբնույթ խախտումներ և թերություններ, որոնցից առավել ուշագրավ են՝

- Ծավալային հավելագրումներ:
- Գնային արհեստական թանկացումներ:
- Անորակ աշխատանքներ:
- Շինարարական օբյեկտների փաթեթներում բացակայում են ճարտարապետահատակագծային փաստաթղթերը:
- Նախագծային ընկերությունների կողմից կազմվում են վատորակ նախագծեր, որոնք շինարարության ընթացքում բազմիցս փոփոխության են ենթարկվում:
- Շինարարության վարման մատյանները լրացվում են թերի և սահմանված կարգի բազմաթիվ խախտումներով:
- Գործող ստանդարտներին չհամապատասխանող շինարարական նյութերի օգտագործում /բացակայում է օգտագործված շինարարական նյութերի որակի հավաստագրերը/:
- Ավարտական ակտերը կազմվում են թերի:
- Տեխնիկական և հեղինակային հսկողությունն իրականացվում է ոչ պատշաճ մակարդակով, պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջապես չեն կատարվում:

Հուշարձանների վերականգնման գործընթացի վերահսկողությամբ ի հայտ են եկել հետևյալ բնույթի բնութագրական խախտումներն ու թերությունները.

- Հուշարձանների ամբողջական վերականգնման համար պահանջվող նախագծանախահաշվային փաստաթղթեր չեն կազմվում, որի հետևանքով հայտնի չէ վերջիններիս վերականգնման վերջնական գումարի չափը:
- Վերականգնվող հուշարձանների ընտրության համար չկան հստակ չափորոշիչներ: Ընտրությունը կատարվում է՝ հաշվի չառնելով գիտական խորհուրդների և շահագրգիռ կազմակերպությունների կարծիքը:
- Նախագծային առաջադրանքները կազմվում են առանց հուշարձանի տեխնիկական վիճակի մասին ակտի առկայության:
- Հուշարձանների վերականգնման նախագծային փաստաթղթերը հաստատվում են առանց փորձաքննության:
- Վերականգնման աշխատանքները իրականացվել են առանց շինարարության թույլտվության:
- Հուշարձանների տարածքում կան շուտումնասիրված և չչափագրված բեկորներ, որոնց փոխարեն տեղում տեղադրվել են նոր տաշած քարեր, խաթարելով դրա պատմական և գեղագիտական արժեքը:
- Վերականգնվող հուշարձանների հեղինակային և տեխնիկական հսկողությունն իրականացվել է թերի, սահմանված կարգի խախտումներով:
- Չի պահպանվում հուշարձանների և դրանց պահպանական գոտիների պահպանության և օգտագործման պայմանակարգը /ռեժիմը/, ինչպես նաև չի իրականացվում հուշարձանների մոնիթորինգ, արդյունքում՝ հուշարձանների տարածքները բնակչության կողմից օգտագործվում են այլ նպատակներով:

Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի վերահսկողությամբ ի հայտ են եկել նաև հետևյալ բնութագրական խախտումներն ու թերությունները՝

- Խողովակները տեղադրված են նախագծային նիշից ավելի ցածր խորությամբ:
- Որոշ ջրագծերի հատվածներում խողովակների ջրամեկուսացումը կամ ընդհանրապես չի իրականացվում, կամ իրականացվում է նորմատիվ պահանջների բազմաթիվ խախտումներով:
- Ջրագծերի որոշ հատվածներում ասֆալտապատման աշխատանքներն իրականացվել են անորակ և նախագծից բազմաթիվ շեղումներով:
- Ջրագծերի որոշ հատվածներում, երկրաբանական հետազոտության արդյունքները չեն համապատասխանում գրունտի իրական վիճակին:
- Ջրագծերի առանձին հատվածներում խողովակների ջրամեկուսացումը իրականացվում է սահմանված նորմատիվ պահանջներին ոչ համապատասխան:

ՀՀ քաղաքաշինության նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ը յուրաքանչյուր ամիս թողարկում է տեղեկագիր, որի հիման վրա Հայաստանում կազմվում են շինարարական աշխատանքների նախահաշիվները:

Վերահսկողությամբ արձանագրվել են հետևյալ խախտումներն ու թերությունները.

- Շինանյութերի շուկայի ուսումնասիրությունը կատարվել է առանց նորմատիվային փաստաթղթերի և մեթոդական ցուցումների:

- Բազմաթիվ տեղեկագրերում գները ֆիքսվել են կամայական և առանց համապատասխան հիմքերի:

- Որոշ դեպքերում տեղեկագրերում տպագրված ապրանքների գները շուկայական գներից ավելի բարձր են:

- Որոշ ապրանքների միջին գների ձևավորման համար հաճախ հիմք է հանդիսացել միայն մեկ ընկերության տրամադրած տեղեկատվությունը:

- Ապրանքների արտադրության հետ որևէ կապ չունեցող կազմակերպությունների տված տեղեկության հիման վրա տեղեկագրերում ձևավորվել է համապատասխան ապրանքի գին:

Նշված խախտումներն ու թերությունները պայմանավորված էին նաև այն բանով, որ ՀՀ քաղաքաշինության նախարարությունը, լինելով շինարարության ոլորտի լիազոր մարմին, միաժամանակ համակարգում էր «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի աշխատանքները, որի հետևանքով շինանյութերի բորսայական միջինացված գների որոշման և ամենամսյա հրապարակվող տեղեկագրերում ներկայացված տեղեկատվությունն առանձին դեպքերում հիմնավորված և իրատեսական չէր:

Վերահսկողության ընթացքում ՊՈԱԿ-ը ՀՀ կառավարության որոշմամբ հանվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության կազմից:

4. Գույքահարկ, հողի հարկ, տեղական տուրք և հողային պաշարներ

Վայոց ձորի, Տավուշի և Արագածոտնի մարզերի ընտրանքային կարգով ստուգված գրեթե բոլոր համայնքներում առկա են հետևյալ խնդիրները.

- Համայնքի բյուջե վճարման հաշվարկներն իրատեսական չեն. կան դեպքեր, երբ վճարներն ընդհանրապես չեն հաշվարկվում, արդյունքում՝ չեն գանձվում կամ դա արվում է մասնակի:
- Որոշ օբյեկտներ ընդհանրապես դուրս են մնացել հարկման բազայից:
- Հողերն ու տարածքներն օգտագործվում են առանց հիմքերի, առանց վարձակալության պայմանագրերի, հետևաբար որևէ գումար չի վճարվում:
- Գումարների գանձման հսկողությունը թե մարզպետների, թե համայնքների ղեկավարների կողմից լիարժեք չէ:

Միայն գույքահարկի գծով ընտրանքային կարգով ստուգված համայնքներում հաշվետու ժամանակաշրջանում չի վճարվել 181,927.0 հազ. դրամ, այսպես օրինակ՝

- ք. Աշտարակում՝ 75,653.4 հազ. դրամ:
- ք. Դիլիջանում՝ 20,157.5 հազ. դրամ:

Հողի հարկի գծով ընտրանքային կարգով ստուգված համայնքներում հաշվետու ժամանակաշրջանում չի վճարվել 114,657.1 հազ. դրամ, այսպես օրինակ՝

- ք. Աշտարակում՝ 31,007.8 հազ. դրամ:
- ք. Ջերմուկում՝ 7,109.1 հազ. դրամ:

Տեղական տուրքերի գծով ընտրանքային կարգով ստուգված համայնքներում չի վճարվել 60,242.1 հազ. դրամ, այսպես օրինակ՝

- ք. Աշտարակում՝ 12,811.0 հազ. դրամ:
- ք. Ջերմուկում՝ 8,782.0 հազ. դրամ:

Հողի վարձավճարների գծով Վայոց ձորի, Տավուշի և Արագածոտնի մարզերի ընտրանքային կարգով ստուգված համայնքներում, ընդհանուր առմամբ, չի վճարվել 140,126.7 հազ. դրամ, այսպես օրինակ՝

- Վայոց ձորի մարզում՝ 13,970.9 հազ. դրամ, այդ թվում՝ 9,284.7 հազ. դրամ Արենիի գյուղապետարանին չվճարված ապառքի և տույժի գումար:
- Արագածոտնի մարզում՝ 86,007.3 հազ. դրամ, այդ թվում՝ 24,773.8 հազ. դրամ Աշտարակի քաղաքապետարանին, 37,461.5 հազ. դրամ՝ Արագածի գյուղապետարանին չվճարված ապառքի և տույժի գումար:
- Տավուշի մարզում՝ 40,077.9 հազ. դրամ, այդ թվում՝ 10,728.5 հազ. դրամ Դիլիջանի քաղաքապետարանին, 7,604.3 հազ. դրամ՝ Բագրատաշենի գյուղապետարանին չվճարված ապառքի և տույժի գումար:

Բացի այդ, Վայոց ձորի, Տավուշի և Արագածոտնի մարզերի համայնքներում տարիներ շարունակ գույքահարկի վճարումներ չեն կատարվել հարկման բազայում հաշվառված՝ ֆիզիկական անձանց պատկանող, չշահագործվող փոխադրամիջոցների համար, առանձին օբյեկտներ դուրս են մնացել հարկման բազայից:

Խախտելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջը, շատ դեպքերում համայնքի տարածքում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներից համայնքի բյուջե չի գանձվել գործունեության թույլտվության համար տեղական տուրք:

Պետք է նշել, որ չգանձված գումարների զգալի մասը վերահսկողության արդյունքում վերականգնվել է, ինչը նշանակում է, որ այդ գումարների գանձումը նախկինում նույնպես հնարավոր է եղել: Մյուս կողմից պարզվում է, որ գումարների գանձման նկատմամբ թե համայնքի ղեկավարների, թե մարզպետների կողմից պատշաճ հսկողություն չի իրականացվել:

Համայնքային սեփականությունն օտարվում և վարձակալության է տրվում շուկայականից զգալիորեն ցածր գներով:

Արագածոտնի մարզի Ոսկեվազ, Ուշի, Օհանավան և Արագած գյուղապետարանների, Աշտարակի քաղաքապետարանի կողմից հողեր են օտարվել, որոնց գնորդները ընդամենը մեկ տարի հետո այդ հողամասերը վաճառել են 4-ից մինչև 29 անգամ ավելի բարձր գներով: Արդյունքում՝ այդ համայնքների բյուջեները զրկվել են ավելի շատ ֆինանսական միջոցներ ստանալու հնարավորությունից:

Համայնքային հողերը, շատ հաճախ, օգտագործվում է ոչ նպատակային:

Ջերմուկի քաղաքապետարանի կողմից «Վայքի ԾՇՇ» ՓԲԸ-ին հատկացվել է 6400քմ գյուղատնտեսական նշանակության հողատարատարածք, որը փաստացի օգտագործվել է խճաքարի արդյունահանման համար:

Առանց հողամասի նպատակային նշանակության փոփոխման «Սթոունեյջ» ՍՊԸ-ի կողմից Արագածոտնի Մաստարա համայնքի վարչական տարածքում գտնվող 11.33 հա

գյուղատնտեսական նշանակության հողամասը օգտագործվում է տուֆ քարի արդյունահանման համար:

4. Սոցիալական ոլորտ

Կենսաթոշակների և նպաստների վճարման գործընթացի օրինականության և արդյունավետության գնահատման նպատակով Սոցիալական ապահովության պետական ծառայության 51 տարածքային բաժիններից 14 տարածքային բաժիններում ընտրանքային ստուգմամբ արձանագրվել են բազմաթիվ խախտումներ: Մասնավորապես՝

1. Մահացած կենսաթոշակառուներին վճարված գումարներ

2008, 2009թթ. և 2010թ. ութ ամիսների կտրվածքով մահացած կենսաթոշակառուների թիվը՝ 58 921:

Ընտրանքային կարգով ստուգվել է 843 գործ: Հայտնաբերվել է տարբեր բնույթի 581 խախտում:

Մահացած կենսաթոշակառուներին վճարվել է դեպոնենտային գումար:

2005թ. օգոստոսին մահացած կենսաթոշակառու 2009թ. հուլիսին «դիմել և ստացել է» 1 մլն 24 հազ. 404 դրամի չափով դեպոնենտային գումար:

Մահվանից հետո կենսաթոշակառուի անվամբ պարբերաբար վճարվել է ամենամսյա թոշակ:

Կենսաթոշակառու մահացել է 02.09.2005թ., սակայն մինչև ստուգման պահը «վճարվում էր կենսաթոշակ»: Մահվանից հետո «վճարված» գումարը կազմում է 1.1 մլն դրամ:

2. Դեպոնենտի ձևով կատարվող վճարումների մասով

2008, 2009թթ. և 2010թ. ութ ամիսների կտրվածքով դեպոնենտ ստացող կենսաթոշակառուների թիվը կազմում է 14 287 հոգի:

Ընտրանքային կարգով ստուգվել է 1656 գործ:

Հայտնաբերվել է տարբեր բնույթի 1157 խախտում:

Դեպոնենտը վճարվել է արդեն վճարված ժամանակաշրջանի համար (կատարվել է կրկնակի վճարում):

Կենսաթոշակառուին 2008թ. հոկտեմբերին միանվագ վճարվել է 6 ամսվա կենսաթոշակ: Վճարումը կատարելուց 3 ամիս հետո արդեն վճարված ժամանակաշրջանի համար կրկին կատարվել է վճարում:

Դեպոնենտի վճարում կատարելուց հետո այն տեղեկատվական բազաներում ներկայացվել է որպես «չվճարված»:

2009 թ. օգոստոսին կենսաթոշակառուին վճարված 1 մլն 85 հազ. դրամի չափով դեպոնենտի գումարը տարածքային տեղեկատվական բազայում ներկայացվել է որպես «չվճարված»:

Դեպոնենտի վճարումից հետո տվյալ գործը կրկին մնում է ցուցակում և ներկայացվում է որպես դեպոնենտ:

Համաձայն գործող կարգի, դեպոնենտի վճարումից հետո կենսաթոշակառուի գործը պետք է տեղափոխվի կենսաթոշակի ընթացիկ վճարման ռեժիմ: Այսպես օրինակ՝

Կենսաթոշակառուին 2009թ. դեկտեմբերին վճարվել է 978,000 դրամ դեպոնենտ գումար, որից հետո գործը կրկին մնացել է դեպոնենտի ցուցակում: Վերահսկիչ պալատի աշխատակցի

տոնային ստուգայցով պարզվել է, որ կենսաթոշակառուին 15 տարի առաջ մեկնել է ԱՄՆ՝ մշտական բնակության:

Առանձին դեպքերում տարածքային բաժիններից բացակայում են կենսաթոշակառուների գործերը:

Քանաքեռ-Զեյթուն տարածքում չի հայտնաբերվել 19 թոշակառուի գործ: Կենսաթոշակառուին 2008թ. ապրիլին «վճարվել է» 807,000 դրամ դեպոնենտային գումար, սակայն պարզվել է, որ կենսաթոշակառուին մահացել է 1990թ. սկզբին: Կենսաթոշակառուի անձնական գործերը չկան:

Աշխատանքային ստաժի հաշվարկման վերաբերյալ

Համաձայն «Լիաննա» ՍՊԸ-ի տեղեկանքի քաղաքացին ընկերությունում աշխատել է 1973-2008թթ., սակայն պարզվել է, որ «Լիաննա» ՍՊԸ-ն պետական գրանցում է ստացել 1995թ.-ին (22 տարվա կեղծ աշխատանքային ստաժ):

3. «Վետերանների պատվովճարներ» ծրագրի վերաբերյալ

Պատվովճար նշանակվում է Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին, Լենինգրադի բլոկադայի մասնակիցներին և համակենտրոնացման ճամբարների անչափահաս գերիներին: Ամսական գումարի չափը՝ 20,000 դրամ:

2008, 2009թթ. և 2010թ. ութ ամիսների կտրվածքով պատվովճար ստացող վետերանների թիվը՝ 12 100 մարդ:

Ընտրանքային կարգով ստուգվել է 85 գործ:

Հայտնաբերվել է տարբեր բնույթի 11 խախտում:

Պատվովճար նշանակվել է պատերազմի վետերան չհանդիսացող անձանց:

1959թ. ծնված անձը համարվել է Հայրենական մեծ պատերազմի մասնակից, և 2007թ. նոյեմբերից մինչև ստուգման պահը ստացել է պատվովճար:

Պատվովճար վճարվել է մահացած վետերաններին:

Վետերանը մահացել է 2007թ. փետրվարին, սակայն պատվովճարի վճարումը շարունակվել է մինչև 2010թ. հունիս ամիսը: Պետական բյուջեից ավելի է վճարվել 800,000 դրամ:

Այլ երկրների քաղաքացիություն ստանալուց հետո պատվովճարի վճարումը շարունակվել է:

Վետերանը 2008թ. մարտից դարձել է ՌԴ քաղաքացի, սակայն ստուգման պահին ստանում էր պատվովճար: Պետական բյուջեից ավելի է վճարվել 600,000 դրամ:

Մոցիալական ապահովության պետական ծառայությունը համապատասխան պետական մարմիններում առկա տեղեկության հիման վրա կենսաթոշակառուների վերաբերյալ իրական տվյալները չի ճշտել, չի համադրել և սխալները չի ուղղել. արդյունքում նախատրյալներ են ստեղծվել կատարելու նշված խախտումները:

2011թ. հունվարից թոշակների վճարումները ՀՀ կառավարության որոշմամբ իրականացնում է «Հայփոստ» ընկերությունը:

Վերահսկիչ պալատի և «Հայփոստի» միջև աշխատանքային համագործակցության արդյունքում, արդեն 2011թ. հունվար ամսին չի վճարվել 20,650 թոշակառու, որը հնարավորություն է տվել պետական բյուջեից տնտեսել 1 մլրդ 365 մլն դրամ (հիմք՝ «Հայփոստի» Վերահսկիչ պալատ ուղարկած պաշտոնական տեղեկանքը):

Փետրվար ամսին չի վճարվել 19 816 թոշակառու, որը հնարավորություն է տվել պետական բյուջեից տնտեսել 1 մլրդ 601 մլն դրամ:

Բացի այդ, վերահսկողությամբ արձանագրվել է նաև մարզպետարաններում և համայնքներում կեղծ փաստաթղթերի հիման վրա նպաստներ ստացած նպաստառու չհամարվող ընտանիքներ, որոնք հիմնականում թաքցրել կամ կեղծել են հաշվառման համար հետևյալ կարևոր հանգամանքները՝

- Կենդանիների և հողերի իրական թվաքանակն ու ծավալը:
- Եկամուտներ ունենալու փաստը:
- Ընտանիքի կազմի վերաբերյալ տվյալները:
- Ծածկագրերի ոչ ճիշտ կիրարկումը և այլն:

Նշված խախտումները հիմնականում համայնքների ղեկավարների կողմից տրված սխալ տեղեկանքների, նպաստառուների ներկայացրած սխալ տեղեկատվության, ինչպես նաև ՍԾՏԳ-երի աշխատակիցների կողմից իրենց պարտականությունների ոչ պատշաճ կատարման հետևանք են:

Պատկերը առավել մասնրամասն ներկայացված է հետևյալ աղյուսակում.

N	Մարզի անվանումը	Նպաստառուների թիվը	Ստուգված գործերի թիվը	Ստուգված գործերի տոկոսը	Խախտումների թիվը	Հայտնաբերված խախտումների %-ը ստուգված գործերի նկատմամբ
1	Արմավիր	5 311	315	6%	20	6,3%
2	Արարատ	-	-	-	-	-
3	Արագածոտն	5 476	951	17%	134	14%
4	Գեղարքունիք	-	-	-	-	-
5	Լոռի	18 810	2 958	16%	252	4,5%
6	Սյունիք	-	-	-	-	-
7	Շիրակ	6 032	1 266	21%	80	6,3%
8	Կոտայք /առանց Հրազդանի ՍԾՏԳ-ի/	6 273	564	9%	60	11%
9	Տավուշ	5 038	1 108	22%	96	8,6%
10	Վայոց ձոր	1 934	773	40%	28	3,6%
11	ք. Երևան	-	-	-	-	-
	Ընդամենը	48 874	7 935	16%	670	8,4%

5. Նախադպրոցական հաստատությունների շենքերի ու հողատարածքների օտարում

Խախտելով «Նախադպրոցական կրթության մասին» և «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքների պահանջները՝ առանց օտարելու իրավունքի և գնահատման Արագածոտնի մարզի Քուչակի գյուղապետարանը 587.7 հազ. դրամով օտարել է համայնքային սեփականության մանկապարտեզի շենքը՝ 1360 քմ հողատարածքով: Գյուղապետարանը կատարել է անօրինական գործարք, և գույքը ենթակա է վերադարձման համայնքի հաշվեկշիռ: Առանց գնահատման 411.6 հազ. դրամով օտարվել է նաև համայնքի ամբուլատորիան, կաթսայատունը և պահեստը՝ 1150 քմ հողատարածքով:

6. Ընդերքի տրամադրում և օգտագործում

Ընտրանքային վերահսկողությամբ բացահայտվել է, որ ընդերքօգտագործման լիցենզիաների տրամադրումը, ժամկետների երկարաձգումը և լիցենզային պայմանագրերի կնքումը, որոշ դեպքերում, իրականացվել է ՀՀ օրենսդրության խախտումներով: Լիազոր մարմնի՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից ընդերքօգտագործողների գործունեության նկատմամբ հսկողական գործառույթներն իրականացվել են թերի և անարդյունավետ:

1. *Սոթքի և Մեղրաձորի ոսկու հանքավայրեր* («Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ)

Գեոարքունիքի մարզի Սոթքի և Կոտայքի մարզի Մեղրաձորի ոսկու հանքավայրերից «Հանքարդյունահանման նպատակով ընդերքօգտագործման» լիցենզային պայմանագրերը կնքվել են ոլորտը կանոնակարգող օրենսգրքի, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների խախտմամբ: Մասնավորապես.

Չեն կատարվել լիցենզային պայմանագրերով սահմանված պարտավորությունները և ներդրումային ծրագրերը:

«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ ՀՀ պետական բյուջե չի վճարել ընդերքօգտագործման նպատակով ընկերությանը տրամադրված տարածքի օգտագործման համար նախատեսված կոնցեսիոն վճարը՝ 24,160.0 հազ. դրամ գումարով:

«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ Արարատի կորզման ֆաբրիկայում ոսկու կորզումը շուրջ 22%-ով ցածր է եղել ընդերքօգտագործման նախագծով նախատեսվածից, արդյունքում՝ 01.01.2008–01.04.2010թթ. ժամանակահատվածում նախագծով նախատեսվածի համեմատ կորզվել է շուրջ 458 կգ պակաս ոսկի:

Ընկերության կողմից չի կատարվել ՀՀ կառավարության 09.11.2006թ.-ի թիվ 1678-ն որոշման պահանջը, որի հետևանքով անհավաստի է դարձել «Լիազոր մարմին» ներկայացված օգտակար հանածոների արդյունահանման մասին տեղեկատվությունը:

Հանքաքարի աղքատացման ցուցանիշը սահմանված 15%-ի փոխարեն կազմել է 36%, որը անթույլատրելի շեղում է, և «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (Կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն համարվում է էական խախտում:

2. *«Գ. Արշակյան», «Հանքաքորգ», «Լույիար», «ՄՄ Ինտերնեյշն», «ԱՄՍԱԹ», «Ռակ Միներալս ընդ Մեթալգ Ինվեսթմենթս Արմենիա», «Միփան-1» ՍՊ ընկերություններին* հատկացված ընդերքի տեղամասերի օգտագործման տրամադրման նկատմամբ վերահսկողությամբ արձանագրվել է.

Ընկերությունների կողմից երկրաբանական ուսումնասիրության և հանքարդյունահանման աշխատանքների կատարման նախագծերը առանց սահմանված կարգով փորձաքննություն անցնելու և հաստատվելու ներկայացվել են լիազոր մարմին, որով խախտվել է «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջը:

Երկրաբանահետախուզական աշխատանքների համար ընդերքի տեղամասերի տրամադրման աճուրդներում հաղթած ըկերություններին ուսումնասիրության հատուկ լիցենզիա տրամադրելուց և լիցենզային պայմանագրեր կնքելուց ընդամենը 1-2 ամիս հետո (առանձին դեպքերում՝ նաև մինչև պայմանագիր կնքելը) կատարվել է տրամադրված տարածքների ընդլայնում: Ընդ որում, ընդլայնված տարածքները զգալիորեն գերազանցել են աճուրդով տրամադրվածի չափերը, իսկ ընդլայնման համար կատարված վճարները զգալիորեն ցածր են աճուրդների մեկնարկային գներից:

Լիցենզային պայմանագրերով հաշվարկված կոնցեսիոն վճարի գումարը կազմել է 61,232.5 հազ. դրամ, որից չի վճարվել 24,283.9 հազ. դրամ (39.7%), որը «Գ. Արշակյան», «ՍՍ Ինտերնեյշն», «ԱՍՍԱԹ» ընկերությունների կողմից ենթակա է վճարման ՀՀ պետական բյուջե:

3. Ստորերկրյա քաղցրահամ, հանքային, թերմալ ջրերի հանքավայրերի մասով իրականացված դիտարկման արդյունքների վերլուծությունից պարզվել է.

Համաձայն «Բնօգտագործման վճարի դրույքաչափերի մասին» ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 864 որոշմամբ հաստատված կարգի՝ հանքային ջրերի յուրաքանչյուր խորանարդ մետրի արդյունահանման համար բնօգտագործման վճարը սահմանվել է 3750 դրամ, մինչդեռ խմելու համար պիտանի ստորերկրյա քաղցրահամ ջրերի համար՝ ընդամենը 1.0 դրամ:

Հանքային ջրերի մասով ընդերքօգտագործման համար տարեկան վճարը սահմանվել է բազային տուրքի 5000-ապատիկի չափով (5,000.0 հազ. դրամ), մինչդեռ քաղցրահամ ջրերի արդյունահանման համար գանձվում է ընդամենը բազային տուրքի 10-ապատիկի չափով գումար (10.0 հազ. դրամ):

Ըստ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանված պաշարների համար վճարը հաշվարկվում է ՀՀ կառավարության կողմից սահմանված հաշվիչ (չափիչ) սարքերով հաշվառվող ջրի ծավալներով, մինչդեռ ՀՀ կառավարության կողմից նման կարգ դեռևս սահմանված չէ:

7. Գիտության ոլորտ

«ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա» ՊՈԱԿ-ին և համակարգի ինստիտուտներին պետության կողմից ամրակցվել են 290445քմ պետական սեփականության շենքեր, շինություններ և 498.5 հա հողատարածքներ:

Վարձակալությամբ տրվել են 8667քմ շենքային տարածքներ և 0,44 հա հողատարածք:

Չի օգտագործվում շենքային տարածքներից 52161քմ (17%) և 60 հա (12%) հողատարածք:

Անմխիթար և վթարային վիճակում են գտնվում 8989քմ շենքային տարածքներ:

Գույքը վարձակալությամբ է տրամադրվել զգալիորեն ցածր գներով և օգտագործվում է ոչ նպատակային

ՀՀ ԳԱԱ-ի կողմից Բաղրամյան 24 հասցեի գրախանութ/պատկերասրահը (423.6քմ) 63 տարով վարձակալության է հանձնվել «Հեյֆերս Վրջին Ակադեմիա» ՍՊԸ-ին՝ տարեկան 3000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ վարձավճարով, որը հետագայում տրամադրվել է

ենթավարձակալությամբ մոտ 9 անգամ ավելի գումարով, տարեկան շուրջ 26000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամով:

Վանաձորի Բուսաբանական այգու վարչական մասնաշենքից և հարակից շինություններից 410քմ մակերեսը վարձակալությամբ տրամադրվել է «Սեկվոյա» ՍՊԸ-ին՝ բնապահպանական և գիտական միջոցառումների կենտրոն ծառայելու նպատակով, սակայն առանց համապատասխան քաղաքաշինական թույլտվությունների վերափոխել է ռեստորանային և հյուրանոցային համալիրի:

Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիրի անմիջական հարևանությամբ գտնվող «Ակոռի» ռեստորանը ապօրինի զբաղեցնում է հարակից 400քմ տարածք, որտեղ տեղադրված են հանրային սննդի ժամանակավոր տաղավարներ:

Բյուրականի աստղադիտարանի 3547 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունները տնօրինվում են ՌԳ Կրասնոգորսկի մեխանիկական գործարանի կողմից՝ անհատույց, մինչդեռ 2003-2010թթ. ժամանակահատվածի համար նվազագույն վարձավճարը կկազմեր շուրջ 30.0 մլն դրամ:

Համակարգում տարեկան գույքագրում հիմնականում չի իրականացվել: Արդյունքում՝ Բյուրականի աստղադիտարանում արձանագրվել է 9 հաստոցների պակասորդ (ԲԱՄ-23 ճնշակադասար, ԿՕՍ 750 պլոկող հաստոց, եռաֆազ տրանսֆորմատոր, ՍՕ-7Ա կոմպրեսոր, 7Բ35 ռանդման հաստոց, «Ագուլիս» եռակցման սարք, ԱԳԳ-303 եռակցման ազրեգատ, Կ4Ա սկավառակային կտրեղ հարմարանք, էլ ուղղիչ սարք, Ս155 գայլիկոնման հաստոց):

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գրադարանային ֆոնդի գրքերի պակասորդը կազմում է 4799 հատ գիրք, կամ գրադարանային ֆոնդի շուրջ 48%-ը:

ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով գիտահետազոտական նպատակներով ինստիտուտին ամրակցված հողատարածքները օտարվել են, փոխարինվել են օգտագործման համար ոչ պիտանի հողերով, որի հետևանքով ձախողվել են մի շարք նպատակային գիտահետազոտական ծրագրեր:

Արմավիրի մարզպետարանի կողմից 2006-2007թթ. օտարվել է արագած բարդիների հիմնադրման ծրագրով ստեղծված տնկադաշտերից՝ 14 հեկտար, որոնց փոխարեն Բուսաբանության ինստիտուտին հատկացվել են այլ անմշակ հողեր: Տնկարանների հիմնախնդիրները չլուծելու պատճառով 2008-2009թթ. ամերիկահայ ճարտարագետների և գիտնականների ընկերակցությունը դադարեցրել է ֆինանսավորումը, և ներկայումս ներդրումային ծրագիրը գտնվում է ձախողման եզրին:

ՌԳ գիտությունների ազգային ակադեմիայի կողմից համատեղ գիտահետազոտական ծրագրերի շրջանակներում ֆինանսավորվող Կովկասյան տարածաշրջանում միակ գիտական կենտրոն հանդիսացող Նոր-Արտամետի գիտափորձարարական բազայի 28.1 հա հողատարածքը ՀՀ կառավարության 13.07.2006թ. թիվ 1815 որոշմամբ փոխանցվել է Նոր Արտամետ գյուղական համայնքին, որը ավագանու 01.02.2007թ. որոշմամբ օտարվել է: Ընդ որում, 1 հա օտարման արժեքը կազմել է 800 հազ. դրամ այն դեպքում, երբ 2009 թվականին ՀՀ պաշտպանության նախարարությունը Նոր-Արտամետ համայնքում ձեռք է բերել 14 հա հողատարածք՝ մեկ հեկտարը՝ 6,714 հազ. դրամով:

ՀՀ ԳԱԱ-ի և համակարգի ինստիտուտների կողմից կատարվել են անարդյունավետ, ոչ նպատակային և չհիմնավորված ծախսեր:

Համակարգի ինստիտուտների գիտական սարքավորումների վերազինման, գիտական պարբերականների բաժանորդագրման համար 2008-2010 թվականներին հատկացված գումարներից 28,123.2 հազ. դրամը օգտագործվել է ոչ նպատակային՝ ծառայողական սենյակների, տանիքների վերանորոգման, սառնարանների, ջրատաքացուցիչների, փափուկ կահույքի և այլ գույքի ձեռքբերման համար:

Գ.Մանվելյանի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտը մոլիբդենի 49%-ոց խտանյութը վաճառել է շուկայական գնից երկու անգամ ցածր գներով (1կգ՝ 3216 դրամ), այն դեպքում երբ Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի մոլիբդենի 45%-ոց խտանյութի մեկ կիլոգրամի շուկայական գինը կազմել է 7278 դրամ: Արդյունքում՝ շուրջ 9,000.0 հազ. դրամի եկամուտ ինստիտուտը պակաս է ստացել:

«ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի 2008թ.-ի տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 4,689.5 հազ. դրամ, բազային ֆինանսավորման մասով ՀՀ պետական բյուջեից 2008-2009թթ. ընթացքում առանց հիմնավորման ավելի է ֆինանսավորվել 36,935.8 հազ. դրամ: Արդյունքում՝ բազային ֆինանսավորմամբ ՀՀ պետական բյուջեից ավելի է ստացվել 41,625.3 հազ. դրամ, որից 18,122.4 հազ. դրամը վճարվել է աշխատողներին որպես պարգևատրում, 23,391.9 հազ. դրամը 01.01.2010թ.-ի դրությամբ մնացել է որպես մնացորդ, որից 15,000.0 հազ. դրամը՝ ավանդադրված է Հայէկոնոմբանկի համապատասխան հաշվում:

«Գալակտիկա» ՓԲԸ-ի կողմից 2008-2009թթ. ՀՀ պետական բյուջե չի վճարվել 19,472.4 հազ. դրամ շահաբաժնի գումար:

Հիմնարար հետազոտությունների և դրանց վրա հիմնված կիրառական նշանակություն ունեցող աշխատանքների արդյունքների մասին:

ՀՀ ԳԱԱ-ի համակարգի ինստիտուտների կողմից 2009թ. ներկայացվել է հիմնարար հետազոտությունների արդյունքներով ստացված 46 կարևոր կիրառական նշանակություն ունեցող գիտահետազոտական առաջարկներ, սակայն դրանց իրականացման ուղղությամբ դեռևս ոչինչ չի ձեռնարկվել: Մասնավորապես՝

Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի կողմից ստորոշվել է գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պայքարին ուղղված պատրաստուկը՝ Ինտերֆերոն ինդուկտորը: ՀՀ-ում ինդուկտորի իրական պահանջը կազմում է տարեկան շուրջ 200 մլն չափաբաժին կամ գումարային արտահայտությամբ՝ շուրջ 3.5 մլն ԱՄՆ դոլար, որի արտադրությունը հնարավոր է կազմակերպել նաև ինստիտուտի բազայի վրա: Դաբաղի բուժման և կանխարգելման համար 2009թ. Հայաստան է ներկրվել 670.0 մլն դրամի պատվաստանյութ, որի մեկ գլուխ խոզի հաշվարկով չափաբաժինը կազմել է 3850 դրամ, մինչդեռ ինդուկտորի մեկ չափաբաժնի գինը կազմում է ընդամենը 600 դրամ: 2010 թվականին հայ-ռուսական ներդրումային համագործակցության կենտրոնը գործնական հետաքրքրություն է ներկայացրել առաջարկի նկատմամբ և պատրաստակամություն հայտնել ֆինանսավորել ՌԴ-ում արտադրության կազմակերպման գործընթացը:

8. Կրթության ոլորտ

Բուհ-երում բյուջետային միջոցների ոչ ճիշտ պլանավորման և սխալ հաշվարկների արդյունքում, հաշվետու տարում, վերահսկողությամբ արձանագրվել են պետական բյուջեից ավելի ֆինանսավորման դեպքեր, այսինքն՝ պետական բյուջեից վճարվում են գումարներ, որոնք իրականում նախատեսված չեն եղել: Մասնավորապես.

Բարձրագույն, միջին և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերով, ինչպես նաև գիտաշխատողների գիտական աստիճանների հավելավճարների համար պետական բյուջեից կատարվել է սահմանվածից ավելի ֆինանսավորում 25,746.7 հազ. դրամ գումարով, որոնք վերահսկողության ընթացքում վերականգնվել են ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝

- Հայկական պետական ճարտարագիտական համալսարան՝ 15,503.2 հազ. դրամ:
- Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան՝ 2,824.7 հազ. դրամ:
- Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա՝ 4,388.8 հազ. դրամ:
- Հայկական պետական ագրարային համալսարան՝ 3,030.0 հազ. դրամ:

Վայոց ձորի, Տավուշի և Արագածոտնի մարզպետարանների պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտների համար ավելի գումար է ֆինանսավորվել համապատասխանաբար՝ 1,772.7 հազ. դրամ, 4,646.6 հազ. դրամ և 46,472.1 հազ. դրամ: Ընդամենը ենթակա է վերականգնման պետական բյուջե 52,891.4 հազ. դրամ:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում լիարժեք վերահսկողություն իրականացնել հնարավոր չէր, քանի որ «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքում ՊՈԱԿ-ների գործունեության նկատմամբ վերահսկողության սահմանափակման արդյունքում վերահսկողության դաշտից դուրս են մնում բուհ-երի տնտեսական գործունեությունից ստացված միջոցները, որը մի քանի անգամ գերազանցում է պետական բյուջեից ստացված միջոցները:

Ընդ որում, ի տարբերություն տնտեսական գործունեությունից ստացված միջոցների, պետական բյուջեից հատկացված միջոցները հիմնականում ուղղվում են հաստատության պահպանման ծախսերին և վերահսկողության տեսանկյունից ռիսկային չեն:

Անհրաժեշտ է քննարկել «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի և 6-րդ հոդվածի 2-րդ մասում փոփոխություն կատարելու նպատակահարմարության հարցը՝ կապված ՊՈԱԿ-ների ֆինանսական միջոցների ձևավորման և ծախսման նկատմամբ վերահսկողական գործառնությունները հստակեցնելու և առկա սահմանափակումները վերացնելու հետ:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների լիցենզավորման և հավատարմագրման գործընթացը կատարվում է օրենսդրության պահանջների խախտումներով:

Մասնավորապես՝

Պետական բուհերն իրենց մասնագիտություններով պետական հավատարմագրում չեն անցել : Մշակված չէ հետբուհական կրթության պետական չափորոշիչը, հետբուհական կրթական ծրագրերն իրականացվել են առանց լիցենզիայի:

ՀՀ կառավարության 2009թ. հուլիսի 9-ի թիվ 808-Ն որոշմամբ հաստատված բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի իրականացման լիցենզավորման կարգի ամբողջական կիրառելիությունը չի ապահովվել, քանի որ ՀՀ կրթության և գիտության նախարարության

կողմից չեն հաստատվել պրոֆետորադասախոսական կազմին ներկայացվող պահանջների, լաբորատորիաների, արհեստանոցների, մարզադահլիճի սարքերով, սարքավորումներով, նյութերով, գույքով հագեցվածության չափաքանակների և ըստ սովորողների համակազմի, գեղարվեստական, մասնագիտական, գրադարանային-տեղեկատվական ու այլ գրականության հագեցվածության վերաբերյալ պահանջները:

Բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների կողմից խախտվել է պրոֆետորադասախոսական կազմին ներկայացվող պահանջը, ըստ որի պրոֆետորադասախոսական կազմի 50%-ի համար տվյալ ուսումնական հաստատությունը պետք է հանդիսանա հիմնական աշխատավայր, իսկ պրոֆետորադասախոսական կազմի 50%-ը ունենա գիտական աստիճան և (կամ) կոչում:

9. Վարկային ծրագրերի մասին

«Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակի կողմից Գերմանիայի վերականգնման վարկերի հաստատության ֆինանսավորմամբ իրականացվել է՝ «Փոքր և միջին ձեռնարկությունների աջակցման» /նաև՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ/, «Վերականգնվող էներգիայի զարգացման», «Բնակարանային ֆինանսավորման», ինչպես նաև Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող «Փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսական մատչելիության» ծրագրերը:

Ծրագրերի իրականացման շրջանակներում համապատասխանաբար հատկացվել է՝ 22.31 մլն ԱՄՆ դոլար* /ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ՝ 43.443 մլն ԱՄՆ դոլար/, 7.97 մլն ԱՄՆ դոլար*, 15.94 մլն ԱՄՆ դոլար*, 50.0 մլն ԱՄՆ դոլար:

«Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակին հատկացված գումարները բաշխվել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընտրված գործընկեր ֆինանսական կազմակերպությունների՝ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների միջև:

Շուրջ 140 մլն ԱՄՆ դոլար վարկային միջոցներ արտաքին պետական վերահսկողության դաշտից դուրս են մնացել, քանի որ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանափակվում է ՀՀ վերահսկիչ պալատի գործառույթները:

ՀՀ վերահսկիչ պալատը համանման խնդրի առջև է կանգնել Ռուսաստանի Դաշնության կողմից ՀՀ կառավարությանը տրամադրած 176.946 մլն ԱՄՆ դոլար վարկային միջոցների նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս: Արդյունքում՝ վերոնշյալ վարկային միջոցները արտաքին պետական վերահսկողության դաշտից դուրս են մնում:

Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից 2009 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարությանը տրամադրված պետական վարկի միջոցների օգտագործման շրջանակներում իրականացվել է՝

- **Աղետի գոտու բնակավայրերում անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովելու ծրագիր («Գլենդել Հիլզ» ՓԲԸ)**՝ 143.055 մլն ԱՄՆ դոլար (52,954,871.0 հազ. դրամ):

Ծրագիրը չի վերահսկվել, քանի որ այն ընթացքի մեջ է և Վերահսկիչ պալատի խորհուրդը նպատակահարմար է գտել ստուգումն իրականացնել ծրագրի ավարտից հետո:

- **«Թամարա Ֆրոք» ՓԲԸ-ի կողմից առաջարկվող «օրգանիկ» այգիների ստեղծման ծրագիր**՝ 0.830 մլն ԱՄՆ դոլար (300,000.0 հազ. դրամ):

* Գնահատման հիմքում դրվել է 2010թ. դեկտեմբերի 31-ի եվրո/դոլար փոխարժեքը՝ 1EUR= 1.328 ԱՄՆ դոլար

ՀՀ կառավարության 12.02.2009թ. թիվ 180-Ս որոշմամբ հավանություն է տրվել «Թամարա Ֆրոթ» ՓԲ ընկերության կողմից առաջարկված «օրգանիկ» այգիների (մշակումը կատարվում է միայն բնական պարարտանյութով՝ գոմաղբ) հիմնելու ծրագրին: «Թամարա Ֆրոթ» ՓԲ ընկերության միջոցով ծրագիրն իրականացնելու նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը 2009 թվականի ապրիլի 2-ին հատկացվել է 300,000.0 հազար դրամի դրամաշնորհ:

Վերահսկողությամբ արձանագրված խախտումները.

1. «Թամարա Ֆրոթ» ՓԲ ընկերության կողմից առաջարկված «օրգանիկ» այգիների հիմնման ծրագիրը իրատեսական չէ ժամկետի և արժեքի առումով:
2. Ըստ բույսերի աճի և վեգետացիայի ժամկետների վերլուծության առաջին բերքի փաստացի ստացումը հիմնադրված շուրջ 20 հա այգիներից հնարավոր է միայն 2012 թվականին, իսկ հիմնադրված 60 հա-ից հնարավոր է ապահովել միայն 2017 թվականից՝ ծրագրով նախատեսված 2013թ. փոխարեն:
3. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքների և նյութերի շուկայական գները սխալ որոշելու, դրանց արժեքը ակնհայտ բարձր գներով հաշվարկելու, ոչ իրատեսական ծրագիր կազմելու արդյունքում պետական բյուջեից հատկացվել է 77.5 մլն դրամ ավելի գումար, որը ենթակա է վերականգնման:
4. Տնտեսությունների ընտրության համար հայտարարված մրցույթը և ծրագրով նախատեսված աշխատանքները կատարվել են բազմաթիվ խախտումներով և ոչ լիարժեք:
5. Չնայած ծրագրով սահմանվել է մենատնտեսների և գյուղացիական տնտեսությունների համար անհրաժեշտ պահանջներ, մրցույթում հաղթող է ճանաչվել ծրագրի պահանջները չբավարարող 3 մենատնտես:
6. Ծրագրով նախատեսվել է ստեղծել տնկարան՝ 3.0 հա մակերեսով, որից 3000 քմ՝ ջերմոցային տարբերակով: Փաստացի ստեղծվել է շուրջ 4.0 հա տնկարան, որից ջերմոցային տնտեսությամբ՝ 240 քմ:
7. ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, հաշվի չառնելով ծրագրով նախատեսված չափաքանակները, պետական բյուջեից հատկացված 300.0 մլն դրամը փոխանցել է «Թամարա Ֆրոթ» ՓԲ ընկերությանն ամբողջությամբ, առանց դրա անհրաժեշտության:
8. Գումարի առկայության պարագայում ծրագրով նախատեսված գործառույթները ամբողջությամբ չեն կատարվել, ծրագրով չօգտագործված 132.0 մլն դրամ գումարը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե:
9. ՀՀ գյուղատնտեսության և էկոնոմիկայի նախարարությունները չեն իրականացրել իրենց վերապահված վերահսկողական գործառույթները: Չեն լուծել պայմանագիրը և չեն պահանջել վերադարձնել ավելի վճարված գումարները:
10. Ծրագրով նախատեսվել է տնկարանում աճեցնել և ֆերմերներին տրամադրել տնկիներ (մեկ հատի արտադրության համար հատկացվել է 220.0 դրամ), սակայն ֆերմերներին տրամադրվել է ներկրված 74404 տնկի՝ յուրաքանչյուրը՝ 755.0 դրամ:

10. Առաջարկություններ

ՀՀ Ազգային ժողովին

1. Պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսական միջոցների ձևավորման և ծախսման նկատմամբ վերահսկողական գործառույթները հստակեցնելու, առկա սահմանափակումները վերացնելու, ինչպես նաև վերահսկողության արդյունավետությունը

բարձրացնելու անհրաժեշտությունից ելնելով՝ քննարկել «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի և 6-րդ հոդվածի 2-րդ մասում փոփոխություն կատարելու հարցը:

2. Հաշվի առնելով հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման նախագծերի կազմման, ինչպես նաև իրականացման առանձնահատկությունները՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան լրացում՝ «Հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման նախագծերի կազմման, ինչպես նաև իրականացման համար աշխատանքները» ներառել լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկում:

3. «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի երկրորդ ժ) ենթակետով սահմանված է տեղական տուրքի տեսակ, որով վառելիքի մանրածախ առևտրի ոլորտն ամբողջական դարձնելու փոխարեն, փոխադրամիջոցների վառելիքի տեսակով պայմանավորված, սահմանափակվում է այդ օրենքի 2-րդ հոդվածով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման դիմաց համայնքի բյուջե տեղական տուրքի գանձումը նույնատիպ գործունեություն՝ վառելիքի մանրածախ վաճառք իրականացնող ավտոգազալցակայաններից:

Օրենքի անկատարությունը վերացնելու նպատակով՝ քննարկել «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի երկրորդ ժ) ենթակետից «հեղուկացված» բառը հանելու նպատակահարմարությունը:

4. Քաղցրահամ ջրերի, հանքավայրերի, արդյունաբերական /շշալցման/ նպատակով օգտագործումը լիցենզավորելու, ինչպես նաև վճարվող պետական տուրքի և բնօգտագործման վճարի դրույթաքաշափերն ավելացնելու նպատակով քննարկել «Լիցենզավորման մասին», «Պետական տուրքի մասին», «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու նպատակահարմարության հարցը:

ՀՀ կառավարությանը

1. Քննարկել ՀՀ կենտրոնական բանկի կողմից ներգրավված արտաքին վարկերի շրջանակներում գործընկեր ֆինանսական կազմակերպությունների կողմից շահառուներին տրամադրված վարկային միջոցների նկատմամբ արտաքին պետական վերահսկողություն իրականացնելու հարցը:

2. Մշակել պատմության, մշակույթի անշարժ հուշարձանների առաջնահերթության, համալիր ուսումնասիրման, ամրակայման, նորոգման, վերականգնման, պահպանության և կոնսերվացման պետական ծրագիր:

3. Երկրաբանահետախուզական աշխատանքներ իրականացնելիս հողամասերի օգտագործման տրամադրման պայմանները ՀՀ հողային օրենսգրքով չկանոնակարգված լինելու հետևանքով, հաճախ նման աշխատանքներ կատարելու համար կնքված հողի վարձակալության պայմանագրերով տրամադրված հողամասի մակերեսները և ժամկետները չեն համապատասխանում ընդերքի օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերով սահմանված հողամասի մակերեսներին և ժամկետներին: Երկրաբանահետախուզական աշխատանքների կազմակերպման արդյունավետության բարձրացման շահերից ելնելով՝ կանոնակարգել հողամասերի օգտագործման տրամադրման պայմանները՝ մակերեսների և ժամկետների մասով:

4. Շինանյութերի բորսայական միջինացված գների որոշման և ամենամսյա հրապարակվող տեղեկագրերում ներառման գործընթացում շահերի բախման խնդիրը լուծելու նպատակով «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ը հանել ՀՀ քաղաքաշինության նախարարության կառուցվածքից:

5. «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ շինանյութերի բորսայական միջինացված գների ամենամսյա տեղեկագրի պատրաստման և հրատարակման գործառույթը պատշաճ կազմակերպելու նպատակով մշակել շուկայական ուսումնասիրություններ իրականացնելու կարգ, մեթոդական ցուցումներ:

6. Բազմաթիվ համայնքների կողմից հողային պաշարների ոչ արդյունավետ կառավարման փաստերը հաշվի առնելով՝ բարձրացնել հողի վարձավճարի նվազագույն շեմը:

7. Համայնքների կողմից տարատեսակ գնի ու մակնիշի ավտոմեքենաների ձեռքբերման փաստերը հաշվի առնելով՝ մշակել համայնքներին ծառայողական ավտոմեքենաներ հատկացնելու առանձին չափորոշիչներ:

8. Գիտական աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու, պետական սեփականության անշարժ գույքը՝ շենք-շինությունները, հողատարածքներն արդյունավետ օգտագործելու նպատակով քննարկել նույնաբովանդակ ուղղություններով գիտահետազոտական աշխատանքներ իրականացնող գիտական կազմակերպությունների օպտիմալացման, ինչպես նաև առանձին գիտական հաստատությունների հետագա գործունեության նպատակահարմարության հարցը:

9. Ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների տարածքները ՀՀ օրենսդրությամբ հաշվարկելու անհրաժեշտությունից ելնելով՝ ՀՀ կառավարության 2009թ. հուլիսի 9-ի թիվ 808-Ն որոշումը լրացնել ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների տարածքներին վերաբերող չափորոշիչներով՝ սահմանելով նվազագույն նորմատիվները:

10. Ելնելով «Կրթության մասին» ՀՀ օրենքի պահանջներից՝ սահմանել պետական պատվերով մեկ սովորողի հաշվարկով ուսումնական հաստատության ֆինանսավորման չափանիշները:

11. Զննարկել՝ ստորերկրյա քաղցրահամ ջրերի յուրաքանչյուր խորանարդ մետրի արդյունահանման համար սահմանված բնօգտագործման վճարի չափը բարձրացնելու նպատակահարմարության հարցը:

12. Զննարկել՝ ստորերկրյա քաղցրահամ ջրերի հանքավայրերի արդյունաբերական (շշալցման) նպատակով օգտագործումը լիցենզավորման ենթակա գործունեություն դարձնելու նպատակահարմարության հարցը, ինչպես նաև տարեկան կտրվածքով վճարվող պետական տուրքի դրույքաչափի ավելացման հարցը:

13. Ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանված պաշարների հաշվառումը կազմակերպելու անհրաժեշտությունից ելնելով՝ մշակել բնօգտագործման վճար վճարող ջրօգտագործողների ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանված պաշարների հաշվառման հաշվիչ (չափիչ) սարքերի տեղադրման և շահագործման կարգ:

14. Զեռնարկել անհրաժեշտ միջոցներ Վերահսկիչ պալատի 40 ընթացիկ հաշվետվություններում արձանագրված վերականգնվող գումարների գանձման ուղղությամբ:

11. Վերահսկիչ պալատի միջազգային հարաբերությունները

Միջազգային հարաբերությունների շրջանակներում տարվող աշխատանքներում արձանագրվել են էական հաջողություններ: Այսպես.

- 2010թ. սեպտեմբերի 29-30-ը քաղաք Երևանում տեղի ունեցավ ԱՊՀ ֆինանսական վերահսկիչ բարձրագույն մարմինների ղեկավարների խորհրդի 10-րդ հոբելյանական

նստաշրջանը, որի ընթացքում Հայաստանի վերահսկիչ պալատն ընտրվեց խորհրդի նախագահող երկիր: Համագումարին մասնակցում էին ԱՊՀ երկրների բարձրագույն վերահսկիչ մարմինների ղեկավարները, Եվրոպական երկրների բարձրագույն վերահսկիչ մարմինների կազմակերպության նախագահը, ինչպես նաև Լեհաստանի, Մերձբալթյան երկրների և Վրաստանի բարձրագույն վերահսկիչ մարմինների նախագահները:

- Գերմանական տեխնիկական համագործակցության գրասենյակի կողմից հատկացված GEORADAR հատուկ համակարգի աշխատանքների արդյունավետությունն ապահովելու համար, ԳՏՀԸ գրասենյակի կողմից Վերահսկիչ պալատին է հատկացվել ճանապարհի քանակական և որակական հատկանիշները որոշելու հատուկ հորատող համակարգ, որի միջոցով ասֆալտից վերցվում է հատուկ նմուշ՝ հետագայում լաբորատորիայում փորձաքննություն անցկացնելու նպատակով: Ընդ որում, ճանապարհաշինարարության վերահսկողությունն ամբողջական և առավել անկախ դարձնելու նպատակով գերմանացի գործընկերների միջոցով նախատեսվում է Վերահսկիչ պալատի համար ստեղծել սեփական լաբորատորիա:
- Ապրիլի 23-ին Ծաղկաձորում տեղի ունեցած գիտաժողովով մեկնարկեց Նիդեռլանդների Թագավորության Հաշվիչ դատարանի և ՀՀ վերահսկիչ պալատի միջև համագործակցությունը: Նախատեսվում է տեխնիկական աջակցություն՝ համատեղ վերահսկողության, ռազմավարական փաստաթղթերի մշակման, փորձագիտական աջակցության, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ուղղություններով: Աջակցության ծրագիրը կշարունակվի մինչև 2013 թվականը: Այդ շրջանակներում.
 - մշակվել է Վերահսկիչ պալատի նոր կայք էջը և էլեկտրոնային հասցեների նոր համակարգը: Նոր կայքն այլևս հասանելի է նաև ռուսերեն և անգլերեն լեզուներով:
 - Մշակվել է Վերահսկիչ պալատի «Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման և զարգացման» ռազմավարությունը:
- Մեյստենբերի 29-ին Երևանում ՀՀ վերահսկիչ պալատի և Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի միջև ստորագրվեց 2010-2012 թվականների համագործակցության ծրագիր, որով երկուստեք հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում նախատեսվում է իրականացնել համատեղ խորհրդակցություններ և ստուգումներ:
- Համագործակցության պայմանագրեր են ստորագրվել նաև Լատվիայի և Ղրղզստանի բարձրագույն վերահսկիչ մարմինների հետ: Այդ շրջանակներում նախատեսվում է փորձի փոխանակում, մասնագիտական ուսուցման և աշխատակիցների որակավորման բարձրացման ոլորտներում համագործակցություն, համատեղ սեմինարների և աշխատանքային հանդիպումների կազմակերպում: